

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ «ԿԱՂԻԱՅԻՆ ՋԱՐԴ» ԼԻԲԱՆԱՆՈՒՄ

Posted on July 26, 2018 by Keghart



Category: [Opinions](#)



[SHANTNEWS.am](#), 5 Յունիս 2018

Հայ Բարեգործական Ընդհանուր Միության Լիբանանի վարժարաններում «կադրային ջարդ» է տեղի ունեցել: Այս մասին SHANTNEWS.am-ին հայտնում են Բեյրութից:



Մեր աղբյուրի փոխանցմամբ՝ շուրջ քսան հայ ուսուցիչներ, առանց հիմնավոր պատճառների, հեռացվել են դպրոցներից: Բեյրութի հայ համայնքում շրջանառվող տեղեկությունների համաձայն՝ ուսուցիչների աշխատանքից ազատման պատճառը քաղաքական է:

[SHANTNEWS.am](#), 5 Յունիս 2018

Հայ Բարեգործական Ընդհանուր Միության Լիբանանի վարժարաններում «կադրային ջարդ» է տեղի ունեցել: Այս մասին SHANTNEWS.am-ին հայտնում են Բեյրութից:



Մեր աղբյուրի փոխանցմամբ՝ շուրջ քսան հայ ուսուցիչներ, առանց հիմնավոր պատճառների, հեռացվել են դպրոցներից: Բեյրութի հայ համայնքում շրջանառվող տեղեկությունների համաձայն՝ ուսուցիչների աշխատանքից ազատման պատճառը քաղաքական է:

SHANTNEWS.am-ին այս մասին տեղեկություն փոխանցած աղբյուրներից մեկը նաև հայտնեց, որ «կադրային ջարդ»-ի պատճառը Լիբանանի՝ վերջին խորհրդարանական ընտրություններում ՀԲԸՄ-ի նախընտրած թեկնածուի օգտին չքվեարկելն է եղել, այն դեպքում, երբ ՀԲԸՄ-ի վարժարանների պատասխանատուները ուսուցիչներին հորդորել էին ակտիվորեն մասնագել և քվեարկել:

Որոշ աղբյուրներ էլ նշում են, որ ՀԲԸՄ-ի հրապարակած որոշումը կապ ունի համայնքում գործող մի քանի վարժարանների միավորման որոշման հետ:

